

ՎԱՀԱՆ ԹՈՓՉՅԱՆԻ ԽՈՒՎՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

ԱՐԱՔՍՅԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու, դոցենտ

ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղ

Ամփոփագիր

Ներկայացվող հոդվածը մեր՝ գյումրեցի նկարիչների մասին պատմող շարքից է: Այն նվիրված է 80-ականների Գյումրու նկարչական դպրոցի վառ ներկայացուցիչներից մեկի՝ Վահան Թոփչյանի արվեստին: Նրա գրաֆիկական շարքերը, ինքնատիպ ու վառ կերպարները, ասես հեգնական ու նուրբ ժպիտով պարուրված գործերը քաջ ծանոթ են նաև արտերկրում: Դրանք յուրօրինակ խոհափիլիսոփայական մտորումներ են մարդկային ցեղի, կյանքի, ժամանակի ու տարածության վերաբերյալ: Վերջին տարիներին նկարիչը ձևավորում է հեքիաթներ՝ մեկտեղելով իր բոլոր սիրելի հերոսներին:

Առանցքային բառեր. *գյումրեցի նկարիչներ, հայկական գրաֆիկա, արտուրդի թարրոն, «Փոքրիկ մարդիկ», «Խորտակվող նավը», Պիպեր Բրեյգել, մարիոնետներ, «Թոչուն. քննապարկեր», Գալերի-25, «Պ. Ս.»:*

Վահան Թոփչյան գրաֆիկ նկարիչը հայտնի է իբրև յուրօրինակ մտածող և ինքնատիպ ստեղծագործող: Նրա արվեստում համադրվում են ավանդական արժեքները և ժամանակակից արտահայտչաձևերը: Թոփչյանը, չունենալով մասնագիտական գեղարվեստական կրթություն, իր ստեղծագործական ուղին ծավալել է անընդմեջ զարգանալու և ինքնակրթվելու ճանապարհով: Այսօր կարելի է վստահ ասել, որ նա ինտելեկտուալ արվեստագետ է և գրաֆիկայի տեխնիկաներին տիրապետող վարպետ: Թոփչյանը գյումրեցի այն ստեղծագործողներից է, որոնք շոշափում են քաղաքի զարկերակը, լսում նրա սրտի բաբախյունը, շնչառությունը՝ բացահայտելով շրջապատող մարդկանց ու երևույթները¹:

1. «Փոքրամասշտաբ, բայց խորիմաստ», [38](https://www.panorama.am/am/news/2014/03/25/v-topchyan/325771?__cf_chl_jschl_tk__=3515e3513f792298dbfd5b3e7f098b40bd4f73-1608124349-0-AWj, վերջին այց 03.03.2019:</p></div><div data-bbox=)

Նկարչին բնորոշ քննադատական աշխարհայեցողությամբ ու ծաղրական կեցվածքով, որով դիտում է «կյանք» կոչվող ներկայացումը, նա թղթին է հանձնում իր տեսածը՝ մերթ հեզնական քմծիծաղով, մերթ՝ անզուսպ քրքիջով: Վահան Թոփչյանը կյանքն ընկալում է որպես որոշակի մեխանիզմ՝ անիվներից, պտուտակներից, մեխանիկական մասնիկներից բաղկացած: Հարկավոր է որևէ արտաքին միջամտություն՝ գործի դնելու բարդ մեխանիզմները: Նրա աշխատանքները դիտելիս՝ ականա մտածում ես, որ կյանքը որքան իրական է ու տրամաբանական, նույնքան էլ անիրական է, մտացածին: Այն ավելի շուտ հիշեցնում է արտուրդի թատրոն, որտեղ իշխում են հիմարության օրենքները¹:

Այս ամենի մասին նկարչի մտորումների հանրագումարն են 1990-ականների ստեղծագործությունները, մասնավորապես՝ «Փոքրիկ մարդիկ» շարքը, որտեղ ներկայացված են սահմանափակ կենսակերպով և մտածողությամբ, համեստ ու փոքրիկ ենթաշխարհի մեջ ապրող մարդկանց ուրախությունը, տխրությունը, անիմաստ սխրագործությունը (նկ. 1): Նրանք իրար հրմշտելով՝ փորձում են մագլցել պարիսպը, որի հետևում ոչինչ չկա: Ցուցադրված է մարդկային (սակ՝ ազգային) վարվեցողության արատավոր դրսևորումներից մեկը. եթե չես կարողանում ինքդ բարձրանալ, չես էլ թողնում, որ ուրիշները բարձրանան: Բարձրացածներից մեկն արդեն վայր է գլորվել: Մյուսներին ևս սպառնում է անփառունակ վախճան: Ի՞նչ է հարկավոր փոքրիկ մարդուն լիակատար երջանկության համար. մեկին՝ մի շիշ ոգելից խմիչք կամ թոչոդ օդապարիկ, մյուսին՝ տուն՝ սարի գագաթին, դեռ ու ակորդեոնի երաժշտություն (նկ. 2): Չկա ոչ մի հոգս ու խնդիր: Կախված իմաստային շեշտադրումից՝ ընդգծված են կերպարների դեմքի ու մարմնի որոշակի մասեր՝ լայն բացված աչքեր, սրված ականջներ, մագակալված ձեռքեր և այլն: Նման գրոտեսկային պատկերումը Թոփչյանի աշխատանքները մոտեցնում է ծաղրանկարների, սակայն չի անցնում սահմանը՝ մնալով ասելիքի համատեքստում:

1. Մարգարյան Ա., Շիրակ աշխարհի ստեղծագործողներ, Երևան, 2016, էջ 47:

Նկարներում, որպես կանոն, տարածությունն ու ֆոնը պայմանական են, ինչը հնարավորություն է ընձեռում ուշադրությունը սևեռելու կերպարների ու ծավալվող գործողության վրա՝ դիտելով դրանք վերժամանակյա տեսանկյունից: Թղթից պատրաստված «խորտակվող նավը» ճոճվում է խարխուլ հենարանին: Անտեսելով մոտալուտ վտանգը՝ նրա ուղևորներից մեկը՝ գիտնականի գլխարկով, կարդում է, մյուսը շեփոր է փչում, երրորդը սիրահետում է պճնված տիկնոջը, մեկ ուրիշը՝ փոքրիկ դրոշը ձեռքին, ինքնակոչ առաջնորդի է հիշեցնում: Նրանք զբաղված են իրենց փոքրիկ հոգսերով ու չեն նկատում, որ առագաստի հետևից ինչ-որ մեկը փչում է՝ կործանման տանելով մակույկը:

Վ. Թոփչյանի պատկերած մարդիկ իրենց կարծում են վիթխարի ու անհասանելի. դա երևում է նրանց կեցվածքից, շարժումներից, դեմքի նշանակալի արտահայտությունից: Մինչդեռ նրանք պարզապես հիմար տիկնիկներ են, որ դեկավարվում են մեկ այլ խամաճիկի կողմից: Նկարիչը միննույն ժամանակ մնում է զուսպ դիտողի դերում: Ուսումնասիրելով «Մարիոնետներ» շարքը՝ ականա ի միտ են գալիս Պիտեր Բրեյգելի «Ֆլամանդական ասացվածքներ» կտավը, Էրազմ Ռոտերդամցու «Գովք հիմարության» ստեղծագործությունը, դադաիզմ գեղարվեստական հոսանքն ու արսուրդի թատրոնը: Թոփչյանի գործերն ասես պնդում են այն համոզումը, թե որքան գոյություն ունի մարդ արարածը, նույնքան էլ՝ հիմարությունը, մեծամտությունն ու տգիտությունը: Այսպիսի մարդիկ քայլում են քաղաքներով, ապրում են տարբեր ժամանակներում ու դեկավարում բոլորին: Նկարչի ստեղծած «մարիոնետները», ճիշտ է, ծնունդն են XX դարի Գյումրու բարքերի, սակայն ապրում են միշտ և ամենուր՝ իբրև համամարդկային թշվառ գոյության հավիտենական ձևեր:

Անցյալը ներկայի հետ համատեղելու սկզբունքի վերախնաստավորման գեղեցիկ փորձ է «Թռչուն. բնապատկեր» շարքը (նկ. 3.), որ ցուցադրվել է 2016թ., Գյումրու «Գալերի-25» ցուցասրահում: Այն յուրօրինակ կերպով հանրագումարի է

բերում նկարչի թեմատիկ որոնումները և տեխնիկական նոր հնարքների փորձարկումը: Մեկ խորագրի տակ ներկայացված են երեք տարբեր շարքեր: Դրանք ասես օրգանապես շարունակում ու զարգացնում են նկարչի նախորդ շարքերը՝ «Պ.Ս.» (Պոստ սկրիպտում), «Մարիոնետներ», «Մարդկային կատակերգություն», որոնցում նկարիչը խոսում է ժամանակի, մարդկային ճակատագրի, հասարակության ու անհատի փոխհարաբերությունների մասին: Այստեղ գլխավոր հերոսը թռչունն է (նկ.4), որ «ճախրելով» մի կտավից մյուսը՝ շարքի բոլոր նկարների տարածությունը լցնում է օդով, լույսով, յուրօրինակ ոգեղենությամբ: Շարքը կատարված է գորշ գույնի բոլոր երանգներով, որոնք տարբեր լուսավորության տակ ստանում են նրբերանգներ ու նոր շեշտադրումներ: Դիմելով տարբեր տեխնիկական միջոցների՝ մատիտ, տուշ, ջրաներկ, օֆորտ՝ նկարիչը գտնում է գրաֆիկական հետաքրքիր լուծումներ:

Եթե «Պ.Ս.» շարքում յուրօրինակ զարգացում են ստացել վերացարկված բնապատկերները¹, որոնց ֆոնին քերծված են թվեր, անուններ, տառեր՝ ասես հիշողության մեջ դաջելով ժամանակի հետքը, ապա այս նոր շարքի բնապատկերները ձերբագատված են թվերից, անուններից, տառերից. նկարիչը «բարձրացել» և վերևից՝ «թռչնի» դիտանկյունից է վերարտադրել միևնույն տարածքները: Շարքի ստեղծագործությունների հիմնական խոհն այն է, որ ժամանակը ջնջում է ամեն ինչ, որպեսզի դատարկ տիրույթ պատրաստի նոր տառերի, թվերի և անունների համար:

Թռչնի պատկերով էջերը աչքի են ընկնում կատարման թեթևությամբ ու դինամիզմով, որ կոչված է հաղորդելու թռիչքի տպավորությունը: Թռիչյանի թռչունն օժտված է անհատական կերպարով, որի հիմնական բաղադրիչները պատկերից-պատկեր խորհրդանշում են փոփոխություն, շարժում, նորություն, պատրանք: Այն ընկալվում է իբրև մի ինքնաբավ բիծ, նշանակ, որ հաղթահարելով թղթի մակերեսային տիրույթը՝ դուրս է թռչում կոնկրետ օդային տարածությունից և շարունակվում այլ պատկերների մեջ:

1. «Պոստ սկրիպտումը» նկարիչը ներկայացրել էր դեռ 2000 թ. Գյումրու Բիենալեին:

Այս շարքին են պատկանում նաև թռչունների հետ դիմանկարները, որտեղ շեշտադրված է արդեն մարդու և թռչնի փոխհարաբերությունը, ընդ որում ոչ միայն հորինվածքային և ձևաձավալային գուգորդության առումով, այլև կերպարների միջև խորհրդանշական համադրության իմաստով (նկ. 5, գուն. պատկ. 9): Ըստ այդմ՝ թռչնի ընկալումը յուրաքանչյուր դեպքում փոփոխության է ենթարկվում՝ հերոսի կերպարով պայմանավորված: Օրինակ՝ երիտասարդ պատանու ձեռքերում այն վերածվում է աքլորի՝ իբրև ինքնահաստատման դրսևորման գրավական, իսկ փքված պարոնի կողքին դառնում է աննկատ թշվառ ճնճուկ: Չէ՞ որ յուրաքանչյուրս կյանքն ընկալում ենք սեփական պրիզմայով ու հայեցողությամբ, ինչպես դա անում է գյումրեցի գրաֆիկ Վահան Թոփչյանը:

SUMMARY

The World of Vahan Topchyan's Philosophical Thought

Arax Margaryan

Gyumri Branch of SAFA of Armenia,

Head of the Department of History and Theory of Art and Humanities,

PhD in Art History

The represented article is a series about artists from Gyumri. It is continuous in nature and is still far from being completed. It is about one of the brightest representatives of the 80's Gyumri art school Vahan Topchyan. His graphic series, unique and bright characters and works delighted with iconic and subtle smile are also well-known abroad. These are unique philosophical thoughts about humanity, life, time and space. In recent years the artist decorates fairytales where he assembles all his favorite heroes.

Keywords: *Artists of Gyumri, graphics, theatre of absurd, "Little men", "Sinking Ship", Peter Breugel, marionette, "Bird, Landscape", Gallery-25.*

РЕЗЮМЕ

Философский мир Вагана Топчяна

Араксия Маргарян


Зав. кафедрой искусствоведения и гуманитарных наук

Гюмрийского отделения ГАХА

Доцент, кандидат искусствоведения

Представленная нами статья является продолжением цикла статей о гюмрийских художниках- работы, которая пока далека от завершения. Статья посвящена анализу творчества представителя гюмрийской художественной школы 80-х годов Вагана Топчяна. Его графические циклы, своеобразные и яркие образы, работы, выполненные в ироничном русле, известны также зарубежом. Они представляют собой своеобразные философские размышления о мире, людях, жизни, времени и пространстве. В последнее время художник часто иллюстрирует сказки, объединяя всех своих любимых персонажей.

Ключевые слова: *гюмрийские художники, графика, театр абсурда, «Маленькие люди», «Тонуций корабль», Питер Брейгель, марионетки, «Птица, пейзаж», Галлери-25.*



1



2




3

1. «Ավիատորը», թուղթ, խառը տեխնիկա, 28X27 սմ:
2. «Փոքրիկ մարդիկ» շարքից:
3. «Թռչուն. Բնապատկեր» շարքից:
4. «Թռչուն. Բնապատկեր» շարքից:
5. «Թռչուն. Բնապատկեր» շարքից:



4



5